տեղէն ահեղ ձայնով մը սկսան երգել Օ՛չեզ Լ՛ուսաւոր գոհաբանեմ երգը, և բոլոր ժողովուրդն ու զօրքերը լռութեամբ ու հանդարտութեամբ մտիկ ըրին. աս լռութիւնը այնչափ էր որ ոչ միայն երգածնին կըլսուէր, այլ նաև քահանայից կարդացած աղօթքները որոշ կըհասկըցուէին։ Լիկոզայոս կայսրը որ ոտքի վրայ կեցած աստուածային պաշտամունքը կըլսէր՝ յանկարծ ծունկի վրայ եկաւ, մէկէն ան հարիւր հազարն ալ նոյնպէս ըրին. և մարդ չկրնար հասկըցընել թէ ինչ վսեմ տպաւորութիւն ըրաւ ամէնուն վրայ ան հանդիսաւոր աղաչանքը, ան լռութիւնը, այնչափ ժողովրդեան ու զօրքին ծունկի վրայ ելած աղաչելը, և մեռնող կայսեր յիշատակը որ դեռ ամէնուն աչքին առջևն էր, ու ամէնուն սիրելի։ Մէյմին ալ երբոր կայսրը գլուխը ծածկեց, նորէն ձի հեծաւ ու դարձաւ դէպ 'ի սիւնը, նշան մը տուածին պէս հինգհարիւր թնդանօթ նետուեցաւ. ան ձայնին հետ նորէն բոլոր ժողովուրդը սկսան ուռա՛ կանչել, թմբուկները զարնել, երաժիշտները իրենց բովանդակ ուժը թափել, և ամէն տեսակ ուրախութեան ձայներ բոլոր քաղաքը թընդացուցին։ Ան միջոցին իսարսխին քովի դրօշակները յանկարծ կարծես թէ իրենք իրենցմէ վար իջան ամիսփուեցան, և արծիւները սիւնին երկրպագութիւն ընելու պէս ծռեցան ու անհերևոյթ եղան։ Որէն առջի ուրախութեան երգերը, և թնդանօթներու ձայներ լսուեցան. անկէ ետքը եկեղեցականք փառաւոր զգեստներով ու գեղեցիկ խաչվառներով զօրքերուն հետ մէկտեղ ծանր ծանր քալելով եկան սեանը չորս կողմը պտըտեցան և օրհնեցին. քանի մը քայլ անոնց ետևէն եկաւ անցաւ կայսրուհին՝ պալատի կանանց հետ, անոնց ետևէն ալ մեծամեծներն ու ազնուականները. ասանկով լըմնցաւ ան մեծ հանդէսը, որուն նմանը քիչ անգամ տեսնուած է աշխարհքիս վրայ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Տաղերգութիւն 'ի մեծն Ներսէս Լամբրոնացւոյ։

ՕՐԱԳՐԻՍ 7 թուին մէջ մեր երջանիկ նախահօրը ներբողին սկիզբը դնելէն ետև, հոս մնացած կտորը դընենք քաղելով։ Բանաստեղծը առջի յօդուածին ետևէն Հայաստանի ուրիշ պարծանքներն ալ քերթողական ոճով կըհամառօտէ. այսինքն մեր ազգին լուսաւորութիւնը, մեծին Ներսիսի արդիւնքը, սրբոց թարգմանչաց ժամանակը, և այլն, ու կըսարէ.

Ո՜վ այդի սիրելւոյն, ցանգապատ, զարդարուն,
Տընկեցար յերևան աշխարհի, ոչ յանկիւն։
Տէր, ըզմի՞ քակեցեր զցանգ նորա ձոլաբարձ,
Եւ ըղնա կըթեցին անցաւորք աշխարհաց։
Վա՜հ, խոզից անտուառաց առաթուր նա հարաւ,
Երկոց վայրենեաց 'ի յարօտ կարգեցաւ։
Այսպէս տուն և դարաստ գիւցազանց երամին
Քակեցաւ, և թորգոմ արտասուեաց ընդ հայկին։
Եւ որպէս յանկարծոյն 'ի տաճար գեղապանծ
Շանթ հրացան բարկութեամբ հոսեսցէ 'ի բարձանց,
Անդ մարդակք հատաքուռք և պշրակք գեղեցիկ.
Եւ որմունք և պահանգք հրաբորբոք, և տանիք,
Կահք չքնաղք զերթ դերբուկք կուաեսցին 'ի յաշխարհն,
Ահաբեկ խուճապեալքն ողբ առցեն և ճրչիւն,
Սոյնգունակ հարուածեալ տուն հայկայ դիւցազնի,
Ա՜հ, 'ի սպառ իսրթնացաւ, հետքն անգամ չերևին։
Կամ որպէս ճարակեալ ախտ 'ի մեծ գերդաստան,
Ախտ, սարսափ երկրածնաց, ախտ գըժար կուրուեր,
Անդ հարսունք և փեսայք, ծերք, տղայք բազմահոյլ
Յարևու խարխափեն իբր 'ի ցայգ աննշոյլ.
Սուգ և մուրճն համակեալ ընդ որմունս տաճարին,
Ձեռն 'ի ծնօտ գերարտասր յորդ հեղուն 'ի յարկին,
Ձայն յողորմայր ընդ այր կողկողն, ոնր է լոյս.
Այսպէս ազգն իմ նրստեր լալագին և անյոյս։...
Գուրթ հարաւ Արարչին. «Մինչև ցե՞ր այդ խաւար
Թախծութեա՞ պաշարէ զԱրամեանն ըզգաւառ։»
Ձայն հնչեաց աստուածեան, «Հապա լոյս եղիցի.»
Եւ եղև լոյս արհի ՄԽԻԹԱՐՈՍ արփենի։
Իբր ուղէշ քաջատունկ 'ի դրախտէն Սեբաստեան.
Աչն ըզսա Տերունւոյն մշակեաց հրաշալան։
Օգ սորա շընչելի, սիւգ դրախտին երկնաւոր.
Ջուր սորայն ոռոգիչ ցող հոգւոյն արփաւոր.
Արմն յերկիր հաստամուր, բուսն ամենաշատարագեմ,
Եւ գիտակ իւր ոստոց ծածկի յամպս երկնաձեմ։
Ըզլերինս բարձրայօնս բա՛ ծածկեաց հովանին.
Եւ ըզմայրան Աստուծոյ բարունակք ծածկեցին։
Ձի մինչ չև սա եղեալ՝ ծանուցաւ յԱրարչէ.
Աչն ինչ մոր շնչեալ զոգ՝ ընտրեցաւ յարգանգէ։
Փորձեցաւ բազմագեմ ելանել ձոյլ ընտիր,
Բազմատանջ վշտաստես միշտ կենաց խաչակիր։...

Վ չասցաւ բաղմասանչ իբր Անօթն ընտրութեան,
Զի բնութիւնս համախուռն եւ նրման ախոյեան.
Հուր և օդ դաշնակից, ծուխն ահեղ և ցամաք,
Տան ճակատ գիւցազնս գոռ յուզեալ դրժընդակ։
Վիշտ բազում 'ի գետոց յորդահոս 'ի ծրփման,
Մրցեցաւ ընդ յաղթ ջուրս 'ի յոգիս ապատման։
Վիշտ բազում և յալեաց ամենեցս Պոնտոսին,
Զոր փրլոյզ Պոսիդոն եռարձէն 'ի ձեռին։
Փորձեցաւ համբերողն յարութեան 'ի հանդէս,
Կրռուեցաւ աննկուն իբր արին Ոգիւսէս։
Վիշտ բազում և յաղցից 'ի մարմնոյս ախտակիր.
Տանջեցաւ, ժուժկալեցաւ այրն Հոգւով ծայրալիր։
Վիշտ անչափ և 'ի սուտ առ յեղբարց 'ի յաղդին,
Եւ ժուժայր և ներեր նահատակն Յիսուսին։...
Ակն ապա 'ի փորձեալն յառեցաւ Տէրունական.
Առ ընտ և չքնաղ եդ գործի ընչական։
Ո՜վ, գործի փորձ գըտաւ 'ի ձեռին Աստուծոյ,
Եւ սովաւ գործք ցուցան հրաշակերտք և արդոյ։
Ո՞ ըղձոյ, ուժն Հայկայ, եդ խաղաղ ըղձտմանս,
Եւ պարարտ ցորենով լից ըղձո անդաստանս։
Ո՞ ընկիգս քոց գրանդեաց հաստատուր զօրացոյց,
Եւ զորդիս քո 'ի քեզ առ Աստուած մերձեցոյց։
Ի մրտից մինչև յեղդ զիւր ըղբան առաքեաց,
Եւ պատգամքն ընթացեալք ձայն եռուն աւետեաց։
Ո՞ ըղքեզ որպէս զասր որպէս ձիւն ըսպիտակ
Ցարդարեալ, և սրբեաց 'ի ժանդոյդ դրժընդակ։
Շնչեցին հողմք սորա 'ի դաշտ քոց արօտից,
Եւ գնացին խաղացին ջուրք յորդեալք խմաստից։
Սա փոխան կորուսեալ քո գրախտին փափկութեան
Նոր գարատ քեզ 'ի մուտս զայս անկեաց Մեծարան։...
Զայս այսպէս արտաքոյ արուեստեալ այս ճարտար,
Եդ ապա հրաշակերտ և գնեալքինն իւր տաճար.
Ի զէն զարդ 'ի Հոգւոյն վառեցաւ տալ ճակատ
Ընդ հրեշից ճիւաղաց 'ի հանդէս մենամարտ։...
Կեանք խոնարհ գիւցազնս խեթ ազգն հրապարտին,
Բրլչակնեաց զչանթընկէց բիրս աչաց գազանին։
Սա կոխեաց զբարձրայօն պերճութիւն աշխարհի,
Զորձ փառաց արկ զանձամբ զգրձձութիւն ցոհ։...
Նա այսպէս 'ի հանդէս բազմաղգի փորձութեան
Մուտ և եալ քաջաղէն ախոյեան յաղթական։
Իսկ կրօնից սրբութիւն յինքն առեալ տոհմականս,
Զերկնաւոր ըզվարուց մեզ եթող ըստերմանս։
Որպէս մեծ անդաստան արմրտեաք ակաղձուն,
Ընդ միոյ երեսուն, ընդ միոյ ետ վաթսուն,
Բաթե, նա եալ 'ի ծայրն. ընդ միոյ և հարիւր,
Եւ զամբարն լից զերկնից 'ի հասից բազմաբիւր։
Նա զհաւատս իւր պահեաց, և զընթացս կատարեաց,
Եւ պրսակ զանթառամն առ 'ի գլուխ և կապեաց։
Կայ յերկնից և 'ի մեզ անքրթիթի ակնարկ.
Եւ հրաւէր 'ի բարձունս հեշտալուր ձայն աղդէ.
« Մի, որդեակք, մի կարծէք, թէ խընդամանվը-
թար
« Մինչև զձեզ իմ առեալ ատ Սրբոցն 'ի կաճառ։
« Թէ շաւիղ ըղարբոց դուք կոխեք 'ի յերկրի,
« Վերձեմեալ նաղեսջիք և յերկնից տաճարի։
« Օրինակ ձեզ եառ նրժգեհեալս յաշխարհի,
« Զիմ Դշխոյն սիրածին միշտ կալեալ հովանի։
« Թէ միայն կեանք խոնարհ ընդգրկեք, և ըղսէր,
« Ձեր երկինք են յաւէժ, յուսացէք անվեհեր։
« Լրուայք դուք ապաքէն զուէրունեան զերանին.
« Լիք աղքատք դուք հոգւով. ձեր է թագն
երկնային։
« Թէ խնդրէք, զբոց սիրոյն 'ի խանդից ձեր հոգւոյ
« Բորբոքել բարդ 'ի բարդ մինչ յաթոռն Աստ.
« Դուք 'ի ձեր հաստուածոյ մինչ յատակն 'ի
ներքին
« Խոնարհեալք, և անդէն վերելք 'ի յերկին։
« Օրինակ ձեզ եառ և մարզից գիտութեան.
« Մի, որդեակք, հուրն 'ի ձեզ մի շիջցի աստուա-
ծեան։
« Արծարծեալ զերթ փրքովք կայծակունս ըզբանի,
« Ըզձրրագն իմաստից խուն նրշոյլ վառեցի.
« Դուք արդ գամ քան ըզդամ մեծաչահ զամբարոք
« Ըզկայծակն յորդեցէք վառ յաւէժ և բորբոք։
« Այլ որպէս յիս տեսէք ձեզ սիպար գեղեցիկ,
« Ի վարժից 'ի Հոգւոյն մի ուսմամբ հովասիք։
« Ժիրաժիր տուք ձեր զաջ 'ի յայգին տէրունի,
« Մըշակել տոհմականս ըզՀոգւոյն արգանդի։
« Տուք ապա և զահեակ ձեր 'ի մարզս իմաստից,
« Եւ զազգին վարժարանս գիք արդեամբք պտղա-
լից։"
Արդ լրեայք դուք, Արդոյք, զՀայրենին յորդորակ.
Մաղթեացուք առ 'ի գործ մեզ օձան երկնառաք։
Տեսանեմ կարկառեալ զաջ մերոյ նախահօր,
Խանդակաթ տալ որդւոց զբրավիգ մեծաղօր։
Աղէ, քաջք, զայս ձիր Հօր քաջամուր զէն առեալ.
Օն եկցուք 'ի հանդէս նահատակք քաջնափայլ։
Նահատակք 'ի կրօնիս կանոնաց պընդապատք.
Նիգ նեցուկ տաճարիս լեալ յաւէժ պահապանք։
Նահատակք երկնաչուք 'ի յընթացս հոգւոր,
Հեզ խոնարհ նախահօրս հետեւեալք անխոտոր։
Նահատակք և 'ի վարժս ըզմիմեանս եղանեալ.
Շատ են վարժք իմաստից. քաւ, անտես մի առնեալ.
Ոմն յիմաստ աստուածեան, ոմն 'ի վարժ 'ի բնա-
կան,
Կէսք յաշխոյժ Պարնասին, կէսք 'ի գիր հայկարան։
Մի և զայն մոռասջիք. նահատակք լիք յաղգին
Ազգասէր բարոյիք մեր Նրման գիւցազնն։
Զի գու, Հայր, որպէս երգն իմ երգեաց 'ի սկըզ-
բան,
Բերկրեցար ծընընդովք, բերկրեսցիս և յապայն.
Բայց և ինձ գուութ արկցես 'ի խանդիցդ ով Հայր իմ,
Ձիր առատ տացես զԱզգ ինձ որդւոյ քոյ վերջին։

Լրաղ՝։

Լրագիս մէջ ինծի անանուն երևցաւ որ իբր թէ գրքերս ժողվեր սըն

1 Անցեալ դարուն իտալացի մատենագիրներուն մէջ խիստ անուանի է Գասպար Կոծծի անունով կոմսը։ Իրեն գեղեցիկ իտալաբանութիւնը, զուարճախօս ոճը, և ուղղղ բարոյականը ամէն տեղն սիրելի ըրած են իտալացւոց իր գրուածքները. և իր շարադրած բարոյական պատմութիւններն ուքովէն ձեւացուցած դիպուածները, խօսակցութիւնները, երազները, շատ խելք կըսորվեցնեն կարդացողին, ու առանց ձանձրացընելու կըկրթեն զինքը։ Հոս օրինակի համար գրածնիս իրեն երազներէն մէկն է՝ թարգմանած։